Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 39

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի վարչական տարածքում գործող ոռոգման ներտնտեսային համակարգերն անհատույց օգտագործման իրավունքով <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը հանձելու մասին:

/Զեկուցող՝ Դ. Ավագյան/

5. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ատոմյան/

7. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

8. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու և հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արուճ, Ղազարավան և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Բաղդասարյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Աշտարակ համայնքի «Աշտարակ քաղաքի թիվ 1 Մանուշակ մանկապարտեզ», «Աշտարակ քաղաքի թիվ 3 Հովիկ մանկապարտեզ», «Աշտարակ քաղաքի թիվ 5 Արաքս Մուրադյանի անվան մանկապարտեզ» և «Աշտարակ համայնքի Կոշի թիվ 17 Կվաշ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների շենքերի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի «Աշտարակ քաղաքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ» և «Օշականի թիվ 9 Գայանե մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Ագարակ, Ավան, Արուճ, Բազմաղբյուր և Նոր Եդեսիա բնակավայրերում նոր մանկապարտեզի շենքերի կառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աղձք, Բյուրական, Ոսկեվազ, Օհանավան, Ուշի և Սասունիկ բնակավայրերի մշակույթի տան շենքերի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի «Կոշի արվեստի դպրոց» ՀՈԱԿ շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ քաղաքի Խաչատուր Աբովյան փողոցի հիմնանորոգում, բնական քարով սալարկում, խճապատում՝ համալիր բարեկարգման միջոցառումների իրականացում», «Աշտարակ քաղաքի կախովի կամուրջի հիմնանորոգում, դեպի կամուրջ տանող աստիճանների, լուսավորության համակարգի վերանորոգում և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» (այսուհետ' ծրագրեր) թվով՝ 7 սուբվենցիայի հայտերին' համաձայն հավելվածի:

Սահմանել որ՝

1) Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը:

2) ծրագրի ներկայացման համար համայնքի 2025 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագրերը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

3) ծրագրերի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 3</u> - Հարկային արտոնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> օրենքների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 4</u> - Աշտարակ համայնքի վարչական տարածքում գործող ոռոգման ներտնտեսային համակարգերն անհատույց օգտագործման իրավունքով <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը հանձելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի խորհրդական Դավիթ Ավագյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ջրային

օրենսգրքի>> 55.1, 61.1, <<Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին>> օրենքի 20-րդ, 30-րդ, 40-րդ հոդվածներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի սեփականությունը հանդիսացող ներտնտեսային ոռոգման ցանցն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը /այսուհետ՝ ՋՕԸ/: Սույն որոշման պահանջներից բխող իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Համայնքի վարչական տարածքում ներգրավված բնակավայրերի՝ նախկին համայնքների հետ կնքված և ջրօգտագործողների ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պայմանագրերը համարել լուծված:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

* Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Մանկական զարգացման հիմնադրամի տնօրեն Լուսինե Սիմոնյանի 15.05.2024թ. N 5356 դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող Աշտարակ քաղաքում գտնվող անշարժ գույքից (հասցե՝ Գ.Ղափանցյան փողոց 1, անշարժ գույքի սեփ. վկ.՝ N 05122018-02-0010) 63,2մ^2 տարածքն անհատույց օգտագործման իրավունքով Մանկական զարգացման հիմնադրամի կողմից ստեղծված ԼՂ-ից բռնի տեղահանված երեխաներին և ընտանիքներին սոցիալ - հոգեբանական աջակցություն մատուցող կենտրոնին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 6 - Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի /ՀՏԶՀ/ կողմից Աշտարակ համայնքում իրականացվող <<Կոմունալ ծառայությունների բարելավում>> ծրագրի շրջանակներում որպես նպատակային նվիրաբերություն տրամադրված, Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող UAZ 23632-159-01 մակնիշի, 593 CZ 61 պետհամարանիշի (VIN-XTT236320R1015298) բեռնաուղևորատար մեքենան անհատույց օգտագործման իրավունքով <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 7 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Ժորա Ալեքսանյանի 15.05.2024թ. N 5374, Ռոմիկ Բաղալյանի 16.05.2024թ. N 5398, Վազգեն Ղարիբյանի 29.05.2024թ. N 5869 և Հարություն Հարությունյանի 31.05.2024թ. N 6060՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրի 02-108-0232-0128 ծածկագրով, Ժորա Սոսի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 2,79954հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,2463հա

արոտավայրի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնաշենքի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0225-0004 ծածկագրով, Ռոմիկ Վարազդատի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2194հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնաշենքի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0231-0021 ծածկագրով, Վազգեն Վարդանի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2896հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնաշենքի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 07-050-0121-0134 ծածկագրով, Հարություն Համլետի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 0,22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 8</u> - Հողամասերի փոխանակություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք

ընդունելով <<ԷԼՔԵՅԲԻ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ>> ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Մանուկյանի 29.05.2024թ. N 5904 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող /ծածկագիր՝ 02-112-0145-0013/, <<ԷԼՔԵՅԲԻ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,2003հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող, 02-112-0145-0015 ծածկագրով 0,2հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի հետ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Յ Ի Ն – 9</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Գարիկ Նասոյանի 22.02.2024թ. N 2108, Կարապետ Հայրապետեանի 11.04.2024թ. N 4122, <<ԿԱ ՓԱՐԹՆԵՐՍ>> ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Ասատրյանի 23.04.2024թ. N 4610, Հերմինե Զարգարյանի լիազորված անձ Համլետ Զարգարյանի 06.05.2024թ. N 5031, Դավիթ Ադամյանի լիազորված անձ Արթուր Տիգրանյանի 14.05.2024թ. N 5272, Նարինե Հակոբյանի լիազորված անձ Զավեն Ենոքյանի 23.05.2024թ. N 5735, Աննա Մնացականյանի լիազորված անձ Լուսինե Դարբինյանի 24.05.2024թ. N5792, Քյարամ Հակոբյանի լիազորված անձ Հովակիմ Իրիցյանի 27.05.2024թ. N 5814, Հասմիկ Հաննայի լիազորված անձ Սարգիս Չիլինկիրեանի 29.05.2024թ. N 5900 և Սամվել Գևորգյանի 30.05.2024թ. N 5980 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-086-0114-0020 ծածկագրով 0,05222հա և 02-086-0114-0021 ծածկագրով 0,06232հա

համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը /վարելահող/ ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից՝ ընդլայնվող 02-086-0114-0025 ծածկագրով հողամասի սեփականատեր Գարիկ Մելքոնի Նասոյանին:

2. Աշտարակ համայնքի Տեղեր բնակավայրի Այգեգործական թաղամասի 1-ին փողոց, N 17 հասցեում գտնվող, 02-106-0102-0034 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 144,4քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-106-0102-0021 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Կարապետ Հայրապետի Հայրապետեանին:

3. Աշտարակ համայնքի Բազմաղբյուր բնակավայրի 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, N 10/1 հասցեում գտնվող, 02-024-0018-0075 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 236քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 1 400 000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-024-0018-0045 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր <<ԿԱ ՓԱՐԹՆԵՐՍ>> ՍՊԸ-ին:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0692-0045 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,04281հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0692-0050 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Հերմինե Գրիգորի Զարգարյանին:

5. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տանձանոց թաղամաս, 4-րդ փողոց, N 30/1 հասցեում գտնվող, 02-001-0008-0082 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 147,1քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի եռապատիկի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0008-0034 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Դավիթ Ադամյանին:

6. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0355-0188 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0031հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ուղղակի վաճառքով /կադաստրային

արժեքի 100-ապատիկի չափով/ օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0355-0070 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Նարինե Վլադիմիրի Հակոբյանին:

7. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0670-0020 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,25586հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 10-ապատիկի չափով/ օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0670-0021 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Աննա Ռուբենի Մնացականյանին:

8. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Գեղազնիկի փողոց N 10/3 հասցեում գտնվող, 02-001-0106-0408 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 17,8քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից, Գեղազնիկի փողոց, N 10 հասցեում գտնվող, ընդլայնվող 02-001-0106-0401 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման կառուցապատված հողամասի սեփականատեր Քյարամ Արամայիսի Հակոբյանին:

9. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0443-0199 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0781հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը ուղղակի վաճառքով՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0443-0200 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Հասմիկ Դիկրանի Հաննային:

10. Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-087-0364-0006 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0447հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից՝ ընդլայնվող 02-087-0364-0003, 02-087-0364-0005 և 02-087-0364-0007 ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի սեփականատեր Սամվել Ռաֆիկի Գևորգյանին:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու և հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերություն կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 14.05.2024թ. N 2/փ-169 դրական եզրակացությունը Նոր Եդեսիա բնակավայրում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 31-րդ կետերի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-080-0004-0022, 02-080-0004-0058 և 02-080-0004-0059 ծածկագրերից 0.6370հա ընդհանուր մակերեսով /0.49385հա գյուղ. այլ և 0.14315հա արոտավայր/ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային, ինչպես նաև բնակավայրերի նշանակության 02-080-0006-0026 և 02-080-0006-0060 ծածկագրերից 0.5432հա ընդհանուր մակերեսով բնակավայրերի այլ հողամասերի և 02-080-0548-0001 ծածկագրից 0.0718հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերի գործառնական նշանակությունը բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման, իսկ բնակավայրերի նշանակության 02-080-0006-0026 և 02-080-0006-0060 ծածկագրերից 0.07933հա ընդհանուր մակերեսով բնակավայրերի այլ հողամասերի գործառնական նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության փոփոխությունը: Համաձայնություն տալ Աշտարակ համայնք, Նոր Եդեսիա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-080-0004-0022, 02-080-0004-0058, 02-080-0004-0059, 02-080-0006-0026, 02-080-0006-0060 և 02-080-0548-0001 ծածկագրերից 1,252հա ընդհանուր մակերեսով, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասերը Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրում դպրոց

կառուցելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արուճ, Ղազարավան և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 30.04.2024թ. N 2/փ-143 և N 2/փ-144, 22.05.2024թ. N 207, 23.05.2024թ. N 2/փ-210 և 31.05.2024թ. N 2/փ-225 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Արուճ, Ղազարավան և Փարպի բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող, 02-001-0600-0006 ծածկագրով 0,25հա հողամասից 0,16164հա գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-068-0420-0005 ծածկագրով 0,25հա մակերեսով հողամասից 0,08602հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային

նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Արուճ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-022-0034-0028 և 02-022-0034-0059 ծածկագրերից 0,29462հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության 02-001-0859-0014 ծածկագրով 1,855252հա հողամասի նպատակային նշանակությունը, իսկ բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման 02-001-1528-0002 ծածկագրից 0,000102հա և 02-001-1528-0004 ծածկագրից 0,006826հա, 0,007192հա, 0,000395հա, 0,000046հա և 0,016885հա հողամասերի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

5. Հաստատել Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող, 02-110-0140-0037 ծածկագրով 0,9997հա հողամասից 0,3512հա գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության փոփոխությունը:

6. Բոլոր կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Աշտարակ քաղաքի, Արուճ, Ղազարավան և Փարպի բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը և ժամը սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 11-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի հունիսի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	_____
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ